

Զայս արժան է հաստատութեամբ այսպէս ընդունել. եւ մի՛ որպէս մինչեւ ցայժմ՝ առանց կարելոր քննութեանս՝ համարել ՚ի յանուարի 1198 ամի զմեծ թագընկալութիւնն, որպէս գրեաթէ առհասարակ ասեն եւ կրկնեն ամենայն օտար եւ ազգային պատմիչք: Վկայեն այսմ՝ զատ յայլոց փաստից՝ եւ նամականի շնորհակալութեան թագաւորին եւ կաթողիկոսին՝ առ Հայրապետն Հռովմայ (Իննովկենտ. Գ), գրեալք յամսեան մայիսի այսր 1199 ամի. զի չէր մարթ զայնպիսի կարելոր գիր երախտեաց յապաղել վեշտասան ամիս, եթէ ՚ի սկզբան 1198 տարւոյ կատարեալ էր հանդէս թագընկալութեանն: Ամաւ միով եւս յառաջ կանխէ զթագաւորութիւն Լեւոնի՝ Հեթում՝ եղբայր Ս. Ներսէսի՝ ՚ի կարգի թարգմանութեան Ժամանակագրութեան կայսերաց Հռովմայ, այսպէս ասելով վասն Ենրիկոսի Զ. (գոր նա գրէ Ե). «Սա՛ յեթօներորդ ամի թագաւորութեան իւրոյ՝ պատուեաց զԼեւոն որդի Ստեֆանէի յԴաւրիներանց՝ թագիւ, զկնի փառաւոր արծվէսքին՝ Միանցին (Մակոնցայ) եւ հաստատեաց թագաւոր ամենայն Հայոց, եւ նահանգին Կիլիկեացոց եւ Իսաւրիոյ. սա նորոգեաց զթագաւորութիւնն Հայոց՝ զբազում ամաց եղծեալն, ՚ի թուին ՈԽԶ»⁷⁴: Այս թիւ՝ ըստ վերոյգրելոցս՝ սկսանի յելս յանուարի 1197 ամի, որում զուգի եւ եօթն ամ թագաւորութեանն Ենրիկոսի, հաշուելով ՚ի յունիս ամսոյ 1190 ամի՝ յորում մեռաւ հայր նորա ՚ի Սելեւկիա. ըստ այսոցիկ յիշեալս ՚ի Հեթմոյ թագապատուութիւն Լեւոնի՝ լինի ՚ի միջոցի յուլիս ամսեան 1197 ամի եւ յանուարի 1198 ամի. այլ ոչ հաւաստի յայնժամ զալ արքեպիսկոպոսին Մոգունտիոյ⁷⁵ եւ թագելն. թուի Հեթմոյ զերկոսին դէպսն զուգել միանգամայն, զառաջին թագընկալութիւնն եւ զերկրորդն կամ զերրորդ զմեծահանդէսն: Ի դէպ է եւս համարել՝ զառաջին նուագսն սոսկապէս ընկալեալ Լեւոնի զթագն, պսակեալ եւ փառաւորեալ, այլ պահեալ յապայն զլրումն փառացն, որ էր *Օծուսն* թագաւորութեան. եւ այսմ ՚ի ճահ գայ յիշատակութիւն արքունի պատմչին, որ ՚ի թուին ՈԽԵ գրէ զառաքումն թագի յԱլէքսէ կայսերէ Յունաց, ՚ի ՈԽԶ զպատգամաւորութիւն Յովհաննու

⁷⁴ Այսպէս համարի եւ Վարդան Պատմիչ, ասելով. «Լեւովն, որ այն ինչ օծեալ էր թագաւոր, ՚ի Յունագաց եւ ՚ի Յունաց առաքելով նմա զթագս, ՚ի ՈԽԶ թուին»:

⁷⁵ Քանզի քարտուղար կայսեր եւ զօրք նորա՝ յետ նուաճման Յոպպէի դարձ արարեալ էին ՚ի Գերմանիա, յամի 1198, մի՛ կարծեսցի թէ եւ եպիսկոպոսն Մոգունտիոյ ընդ նոսին դարձեալ էր ՚ի նմին ամի. յայտ է ՚ի պատմութենէ լատինացոյ ուրումն մերձաժամանակ տարեգրի (Othon de S. Blasio), զի սա յերկրորդումն ամի (1199) դարձ արար ընդ Իտալիա յերկիր իւր: (Մուրադորի, Տարեգրութիւնք Իտալիոյ, ամ 1199):